ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» մարտի 2013թ. N 07

Ք.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Ներքին աուդիտի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1794-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանի 3-րդ գլխի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ներքին աուդիտի կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի համակարգին աջակցելու նպատակով:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել,որ մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար է հանդիսանում մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետը՝ առանց քվեարկելու իրավունքի:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ.ԺՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2013 թ.-ի փետրվար 06 N07կարգադրության

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ

Ա.Ղահրամանյան	Արմավիրի մարզպետ /ներքին աուդիտի կոմիտեի նախագահ/
Լ.Մուրադյան	Արմավիրի մարզպետի տեղակալ /ներքին աուդիտի կոմիտեի անդամ/
Յու.Մանվելյան	Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ /ներքին աուդիտի կոմիտեի անդամ/
Փ.Կարապետյան	Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար /ներքին աուդիտի կոմիտեի անդամ խորհրդակցական ձայնի իրավունքով/

Աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ա.Հովհաննիսյան